# Մարզպետը մասնակցեց զոհված զինծառայող Էդվարդ Հայրապետյանի քառասունքի արարողությանը

29.04.2015

Ապրիլի 29-ին լրացավ մարտի 19-ին դիվերսիայի հետեւանքով զոհված ՊԲ զինծառայող Էդվարդ Հայրապետյանի մահվան քառասուն օրը: Այդ կապակցությամբ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը այցելեց Մուղնի եւ մասնակցեց քառասունքի արարողությանը: Մարզպետը ծաղիկներ զետեղեց զինվորի շիրմին եւ իր զորակցությունը հայտնեց նրա ծնողներին, հարազատներին եւ պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում իր աջակցությունը ցուցաբերել Էդվարդի ընտանիքի անդամներին: